# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

14 հունիսի 2017թ. կնքված N ՀՀՏՄ-ԲԸԱԾՁԲ-17/05/2 պետական գնման պայմանագրի
Փոփոխություն N 1

*ք. Իջևան* *<<14>> հունիսի 2017թ.*

<<ՀՀ Տավուշի մարզպետարանը>>-ը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժ.պ. Ֆ. Ափինյանի, որը գործում է <<ՀՀ Տավուշի մարզպետարանի>> կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և "Գևորգյան և Ներսիսյան" ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ե.Գևորգյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2017 թվականի N 571-Ն որոշումը, 14 հունիսի 2017թ. կնքված N ՀՀՏՄ-ԲԸԱԾՁԲ-17/05/2 պետական գնման պայմանագրի 8.4 և 5.1.2 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 14 հունիսի 2017թ. կնքված N ՀՀՏՄ-ԲԸԱԾՁԲ-17/05/2 պետական գնման պայմանագրի հավելված թիվ 3-ը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2017 թվականի N 571-Ն որոշման շարադրել սույն համաձայնագրի անբաժանելի մաս կազմող հավելված N1 վճարման ժամանակացույցին համապատասխան:

1.2 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 38 760 000 (Երեսունութ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 6 460 000 (Վեց միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժան մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում են հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Տավուշի մարզպետարան
ք.Իջևան Սահմանադրության 1
Հ/Հ 900371051047 ՀՀ ՖՆ Գործ. Վարչ.
ՀՎՀՀ 07611324

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

« Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք.Երևան,Նուբարաշեն 11փ, 21/26
Հ/Հ 11500374479000 "Հայբիզնես բանկ" ՓԲԸ
ՀՎՀՀ 00440841

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 1*
*<<14>> հունիսի 2017թ.*
*կնքված աշխատանքների կապարման*
*թիվ << ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/05/2 >> գնման պայմանագրի*
*փոփոխության N 1*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքների անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 3 | Իջևան համայնքի Ասլանյան փողոցի ասֆալտապատում | | | | | | 19560000 | 19560000 | 19560000 | 19560000 | 19560000 | 19560000 | 19560000 | 19560000 |
| 4 | Իջևան համայնքի Անկախության հրապարակի ասֆալտապատում և բարեկարգում | | | | | | 19200000 | 19200000 | 19200000 | 19200000 | 19200000 | 19200000 | 19200000 | 19200000 |
| | | | | | | | | | | | | | | |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Տավուշի մարզպետարան
ք.Իջևան Սահմանադրության 1
Հ/Հ 900371051047 ՀՀ ՖՆ Գործ. Վարչ.
ՀՎՀՀ 07611324

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

« Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք.Երևան,Նուբարաշեն 11փ, 21/26
Հ/Հ 11500374479000 "Հայբիզնես բանկ" ՓԲԸ
ՀՎՀՀ 00440841

(ստորագրություն)

Կ.Տ.